

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆԸ

Ու որ որ անձը ԿԸ հոռուր շնորհ
դուրս բարձրանայ: (Մտք. 23:12):

Խոնարհութեան կամ համեստութեան համար աղօթելը եւ խոնարհ կեանք մը ապրիլը բոլորովին տարբեր բաներ են: Խոնարհ կեանք ապրելու մեր փափաքը կրնայ մղել մեզ ծառայութիւններ մատուցանելու՝ երբ որ պատեհութիւններ ներկայանան, բայց ծառայութեան կեանք մը կրնայ առաջադրել հպարտութեան: Հեղինակ եւ դասախօս անձ մը այս նկատողութիւնը արձանագրած է. «Մենք կը փափաքեմք ձեռք ձգել խոնարհութիւնը եւ երբ ստանանք զայն՝ յանկարծ կը կորսնցնենք մեր մատներուն մէջէն»:

Ուրեմն, ի՞նչպէս կրնանք գիտնալ, թէ ե՞րբ իրապէս խոնարհ կամ համեստ ենք: Չենք կրնար գիտնալ, բայց երբ ուրիշներուն ծառայելը կ'ըլլայ երկրորդ բնութիւն մեզի համար՝ հետեւած կ'ըլլանք Յիսուսի խօսքին, որ կը գտնուի Մատթեոսի աւետարանին 23-րդ գլուխին մէջ: Մատնանշել ետք, թէ դպիրները եւ փարիսեցիները կը ձգտէին դիրք եւ համբաւ շահելու, Յիսուս ըսաւ. «Ան, որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (համար 12):

Օգտակար կը նկատենք տալ օրինակ մը: Ծերակուտական մը իր պատկանած եկեղեցիին Ս. Գրոց սերտողութեան պահերուն կը մասնակցէր ուրիշ քաղաքացիներու եւ այլ կարեւոր անձանորութիւններու հետ: Սերտողութեան աւարտին ամէն մարդ կ'անապարէր մեկնելու, բայց ծերակուտականը կը մնար հոն՝ աթոռները եւ սեղանները տեղաւորելու:

Երբ ծառայութիւնը մեր սրտէն կը բխի որպէս արտայայտութիւն գութի՝ կ'անհիմն խոնարհութեան մէջ: Մենք չենք գգար թերեւս, բայց Աստուած գիտէ եւ կը գնահատէ: ՅՈՐՊՈՐԱԿՆԵՐ

ԴՊԻՐ

Դպիր կը կոչուին անոնք, որոնք եկեղեցական առաջին չորս աստիճանները ստացած են: Դոնապանութիւն, Ընթերցողութիւն, Երդմնեցուցչութիւն, Զահրնկալութիւն:

Դպրութեան վերոյիշեալ չորս աստիճանները մասնաւոր ձեռնադրութեամբ կը շնորհուին այն նուիրեալ տղոց, որոնք յանախակի իրենց ներկայութեամբ սատար կը հանդիսանան արարողութիւններուն եւ նուիրումով ու ծառայասիրութեամբ կը սպասարկեն եկեղեցւոյ: Մոմ կը բռնեն, բշտ կ'ընեն, սաղմոս կը կարդան, Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան նրագալոյցներուն մարգարէական գիրքերու ընթերցումը կը կատարեն:

Իսկ աւագ դպիրներ, որոնք ուրար կրելու իշխանութիւն ստացած են, քարոզներ կը կարդան, բուրվառ կ'ընեն, ճաշու գիրքի ընթերցումը կը կատարեն, կը մասնակցին շարականներու եւ Ս. Պատարագի քառօրեայ ներգեղութեան, Ս. Խորանի ներգեղութիւնը կը կատարեն եւ առաջնորդի արտօնութեամբ ճաշու Ս. Աւետարանը կը կարդան: Համեստ բայց մեծ է անոնց ծառայութիւնը Հայոց եկեղեցւոյ ծիսակատարութեան մէջ:

Դպիրներու համախմբումը կը կոչուի դպրաց դաս: Իսկ կազմակերպեալ դպրաց դաս մը կ'ունենայ իր տնօրէն խորհուրդը կամ վարչական մարմինը, տնօրինելու համար դպրաց դասի կարիքները, հսկելու դպրաց դասի շարականներու փորձերուն եւ հետեւելու դպիրներուն անթերի եկեղեցի յանախելուն:



ԲՈՒ ԽՈՍԲԻ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

ԹԻՒ 51

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 38.1-8: Եբր. 1.1-14: Ղկ. 17.1-10

ԱԻՇՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 17. 1-10

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղութիւններ անպայման, որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղութեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար, որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար, զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զոջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զոջայ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»:

Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վատահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի»:

Ենթադրենք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիտ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. «Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք, որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ի՛նչ որ հրամայուած է ձեզի, ըսէ՛ք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վատահ եղէ՛ք, որ պիտի հնազանդի ձեզի»:

Հաւատք ունի՞րք Քրիստոսի հանդէպ, եւ նախ քան այս հարցումը, նախ հարց տանք մենք մեզի. «Կը ճանչնա՞րք Քրիստոսը»: Քրիստոսը ճանչնալու եւ Անոր հաւատալու միակ աղբիւրը Աստուածաշունչն է: Մեր հոգեւոր ծարաւը յագեցնենք Աստուածաշունչ մատենը կարդալով:

**Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏ**



Մեր Եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող սուրբերէն մէկն է Սուրբ Յակոբ Մծբնացի հայրապետ: Իր սօնը կանուխէն հաստատուած է Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ ու կը տօնուի ամէն տարի Դեկտեմբեր ամսուան կէսերուն եւ միշտ Շաբաթ օրով կը զուգադիպի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ԿԵԱՆՔԸ

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր եւ հօրաքոջ որդին Ս. Գրիգոր Լուսաւորիչին: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ:

Ան իր քարոզներով, հրաշագործութեամբ եւ նզնաւորի իսիստ կեանքով նշանաւոր եղած է: Մասնակցած է 325 թուականին Նիկիոյ մէջ կայացած Տիեզերական Առաջին ժողովին:

Մծբնի աթոռին համար եպիսկոպոս ձեռնադրուած է, որ Աստուած տեսիլի մը մէջ յայտնած էր Մարուգէ նզնաւորին:

Գրած է վարդապետական նաոեր, բարոյախօսական գրութիւններ եւ մատենագրութեան մէջ ծանօթ «Զգօն» գիրքը:

Ս. Գրիգոր Նարեկացին ներքող մը նուիրած է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին: «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» շարականը նուիրուած է Ս. Յակոբին: Այս շարականը գրուած է այն դէպքին առթիւ, ուր կը պատմուի, թէ Պարսից Շապուհ Բ. Թագաւորը աշխարհաժաւալ իր արշաւանքներու ընթացքին կը հասնի Մծբն: Այն ատեն սուրբը կ'աղօթէ, եւ ահա պիծակներու եւ ձիաստացներու մեծ բազմութիւն մը կը յարձակի Պարսիկներու ձիերուն վրայ եւ անոնք խուճապի մատնուելով ձիերը կը փախչին, իսկ գիւնուորները հետիոտն կը նահանջեն: Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ այս շարականը ձօնած է մեծ սուրբին:

ՍՂՈՐԸ

Քու մօտդ բարեխօսներ ունիմք առաքելները, մարգարէները եւ բոլոր սուրբ մարտիրոսները, հայրապետներն ու վարդապետները: Լսէ՛ անոնց աղաչանքները եւ ազատէ՛ զիս իմ մեղքերէս, տնկէ՛ մէջս շնորհներու հոգին եւ յորդորէ՛ բարին գործելու: Բռնադատէ՛ զիս երբ ծուլանամ, խափանէ՛ չար գործերս եւ սերմանէ՛ մէջս բարիքներու պտուղը: Քաջալերէ՛ զիս ներութեան մէջ, միտքարէ՛ վիշտի պահուն, արժանի՛ դարձուր զիս, Տէ՛ր իմ եւ Աստուած իմ, Յիսուս Քրիստոս, իաշակից ըլլալու քեզի մինչեւ մահ, որպէսզի հրաժարիմ այս աշխարհի հեշտութիւններէն, դասակից ըլլամ Երանելիներուն, հաղորդ ըլլամ աւագակին եւ անմահ կեանքը վայելեմ դրախտին մէջ: Ս. Ե Ասորի

**Հ Ո Գ Ե Ի Ո Ր
Պ Ա Տ Գ Ա Ս**

**ՀՆՏԵՒԻԼ ՔՐԻՍՏՈՍԻ
ՔԱՅԼՆԵՐՈՒՄ**

Երբ Յիսուս քաշուեցաւ ժողովուրդէն՝ ժողովուրդը քաշեց ետէր: Ժողովուրդը աւելի սկսաւ կապուիլ Քրիստոսի յատկապէս Յովհաննէս Մկրտիչի նահատակութենէն ետք: Յովհաննէս դրախտ մեկնեցաւ, եւ Յիսուս դարձած էր միակ յոյսը Հրեայ ժողովուրդին: Երբ Յիսուս շարժեցաւ դէպի ամալի վայրերը՝ ամբողջ ժողովուրդը հետը շարժեցաւ: Երբ Յիսուս ուզեց երթալ տեղ մը, ուր հաց եւ ջուր չկար՝ ժողովուրդը ուզեց հետը երթալ:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ
Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը**

Երբ մեր երկնաւոր Թագաւորը տեղ մը երթայ՝ իր թագաւորութեան անդամները պէտք է հետեւին իրեն: Երբ մեր Ուխտի Տապանակը՝ Քրիստոս, շարժի՝ պէտք է հետը շարժինք եւ երբ կանգ առնէ՝ պէտք է հետը կանգ առնենք (Յեւ. 3.3): Զվախանանք հետեւելու իր քայլերուն, թէկուզ ան մեզ առաջնորդէ փորձութեան անապատներէն: Երբ ան մեզ կ'առաջնորդէ դժուարին ճամբաներէ՝ չընկրկինք դժուարութեանց դիմաց եւ ամուր քայլերով հետեւինք իրեն:

ԱՍՏ ՈՒԾՈՅ ՕՐ Հ ՆՈՒԹԵԱՄԲ

ԵՐԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

**ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ԳԻՏԵԱԼ, ԹԷ ԱՍՏՈՒԾՈՅ
ԱԶԲԻՆ ԻՆՉ Է ՃԵՄԱՐԻՏ
ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ,
Կարդա՛ր ԱՂՂՄՈՍ 49**

Լսեցէ՛ք դուք՝ բոլոր ժողովուրդներ, ականջ տուէք, դուք՝ բնակիչներ ամբողջ աշխարհի: Բոլորդ անխտիր՝ ռամիկներ ու մեծամեծներ, հարուստներ ու աղքատներ: Ինչ, որ պիտի ըսեմ՝ իմաստութիւն է, սիրտէս բխած խորհուրդները՝ ողջմտութիւն: Օրինակ մը պիտի առնեմ, եւ քնարիս նուագին հետ անոր խորհուրդը պիտի բացատրեմ:

Ես վախ չեմ գգար՝ երբ չար օրեր կու գան, եւ նեգաւոր թշնամիներ ամէն կողմէ կը պաշարեն զիս: Մարդիկ, որոնք իրենց ստացուածքներուն կը վստահին, իրենց մեծամեծ հարստութեամբ կը պարծենան: Արդարեւ հարստութիւնը չի կրնար մարդս փրկել, չի կրնար կեանքը գնել Աստուծմէ. որովհետեւ մարդու կեանքը շատ թանկագին է, եւ ռեւէ փրկանք բաւարար չէ՝ անոր անվախճան կեանք պարգեւելու, մահուան ձեռքէն ազատելու: Կը տեսնես, թէ իմաստունն ալ կը մեռնի, յիմարն ու անմիտն ալ կը կորսուին, ուրիշներուն ձգելով ստացուածքներ: Ինչքան ալ հողեր ունենան իրենց անունով՝ գերեզմանը կը դառնայ անոնց մնայուն տունը, անոնց բնակարանը՝ բոլոր ժամանակներուն:

ԱՂՈԹԵՆՔ ԱՂՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ